ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

««ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

1. Ընթացիկ իրավիճակը և նախագծի ընդունման անհրաժեշտությունը

Հայաստանի Հանրապետությունը Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիան[1] վավերացրել է 2002 թվականին: Կոնվենցիայի 20-րդ հոդվածի համաձայն՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի[2] դատավորների թիվը հավասար է Բարձր պայմանավորող կողմերի թվին: Եվրոպական դատարանում Հայաստանի Հանրապետության առաջին դատավորը պաշտոնավարել է 2003-ից 2014 թվականները, իսկ 2015 թվականից ի վեր պաշտոնավարող դատավորի պաշտոնավարման ժամկետը մոտենում է ավարտին[3]:

Նախկինում Եվրոպական դատարանում Հայաստանի Հանրապետության դատավորի ընտրությունը կազմակերպվել է 2014 թվականի «Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատավորի պաշտոնում Հայաստանի Հանրապետության կողմից առաջադրվող թեկնածուների ընտրությունն իրականացնող մրցութային հանձնաժողով ստեղծելու, հանձնաժողովի գործունեության և թեկնածուների ընտրության կարգը հաստատելու մասին» ՆՀ-199-Ն նախագահի հրամանագրով և Մրցութային հանձնաժողովի կողմից ընդունված վերաբերելի որոշումներով:

Ներկայումս Եվրոպական կոնվենցիայի 21 և 22-րդ հոդվածների պահանջներն, ինչպես նաև Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի 2009 թվականի հունվարի 27-ի «*Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատավորի թեկնածուների առաջադրման և դատավորների ընտրության մասին*» թիվ 1646(2009) բանաձևի[4] և Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի 2012 թվականի մարտի 29-ի «*Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատավորի պաշտոնի համար թեկնածուների ընտրության մասին*» թիվ CM(2012)40 ուղեցույցի[5] դրույթների կիրառումն ապահովելու նպատակով, ինչպես նաև նկատի ունենալով Հայաստանի Հանրապետությունից դատավորի ընտրության համար Եվրոպայի խորհրդի

---

[1] Այսուհետ՝ Եվրոպական կոնվենցիա կամ Կոնվենցիա

[2] Այսուհետ՝ Եվրոպական դատարան կամ Դատարան

[3] Եվրոպական կոնվենցիայի 23-րդ հոդվածի (պաշտոնավարության ժամկետը և պաշտոնից հեռացնելը) համաձայն՝ *դատավորներն ընտրվում են 9 տարի ժամկետով և նրանք չեն կարող վերընտրվել*:

[4] Տե՛ս https://assembly.coe.int/nw/xml/XRef/Xref-XML2HTML-en.asp?fileid=17704&lang=en

[5] Տե՛ս https://rm.coe.int/16805cb1ac

Խորհրդարանական վեհաժողովին ներկայացվող երեք թեկնածուների ընտրության գործընթացը, թեկնածուների հավակնորդներ, առաջադրման հավասար պայմանների ստեղծման, նրանց ընտրության անկողմանակալ, թափանցիկ և հրապարակային ընթացակարգեր ունենալու հրամայականը՝ անհրաժեշտություն է առաջացել լրացում կատարել «Կառավարության գործունեության և կառուցվածքի մասին» օրենքի 7-րդ հոդվածում, որը հիմք կհանդիսանա Վարչապետի համապատասխան որոշումների ընդունման համար, որոնք էլ իրենց հերթին միտված կլինի համապարփակ և համակարգային կարգավորելու Եվրոպական դատարանում Հայաստանի Հանրապետությունից ընտրվող դատավորի ընտրության ընթացակարգը:

2. Առաջարկվող կարգավորման բնույթը

««Կառավարության գործունեության և կառուցվածքի մասին օրենքում» լրացում կատարելու մասին» օրենքի նախագծով[6] առաջարկվում է Վարչապետի իրավասությունները սահմանող 7-րդ հոդվածում կատարել լրացում, որպեսզի Վարչապետն այսուհետ իրավասու լինի ձևավորելու միջազգային դատարաններում դատավորի պաշտոնում Հայաստանի Հանրապետության կողմից առաջադրվող թեկնածուների ընտրության հանձնաժողով և հաստատելու դրա աշխատակարգը, ինչպես նաև հաստատելու միջազգային դատարաններում դատավորի պաշտոնում Հայաստանի Հանրապետության կողմից առաջադրվող թեկնածուների ընտրությանը մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը:

[6] Այսուհետ՝ Նախագիծ

3. Նախագիծը մշակող մարմինը

Նախագիծը մշակվել է Վարչապետի աշխատակազմի միջազգային իրավական հարցերով ներկայացուցչի գրասենյակի կողմից:

4. Ակնկալվող արդյունքը

Նախագծով առաջարկվող կարգավորման ընդունման պարագայում հնարավոր կլինի Վարչապետի որոշմամբ (որոշումներով) համապարփակ և համակարգային կարգավորելու Եվրոպական դատարանում Հայաստանի Հանրապետությունից ընտրվող դատավորի ընտրության ընթացակարգը և թեկնածուներին ներկայացվող պահանջները: Մասնավորապես, կլինի Վարչապետի որոշմամբ ձևավորել հանձնաժողով, հաստատել դրա կազմը: Հանձնաժողովը, հաստատված աշխատակարգին համապատասխան կկազմակերպի և կանցկացնի ընտրության գործընթացը՝ երկու փուլով, կիրականացնի մասնակիցների գնահատում և, ի վերջո, երեք լավագույն մասնակիցներից կազմված ցուցակը սահմանված կարգով կներկայացվի հաստատման:

««Կառավարության գործունեության և կառուցվածքի մասին օրենքում» լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի ընդունմամբ այլ իրավական ակտերում փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում: